

3977

ԳԻՐԻՆԻՍ

125 94

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

3K7

Գ-61

ՊԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

3K7
7-61

Ս. ԳԻՐԻՆԻՍ

30 JUN 2005
21 DEC 2009



ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ



19 MAR 2013

3977

Պետերսբուրգի տպարան
Գլավլիտ 6551 (բ)
Հրատար, 1709
Պատ. № 3512
Տիր. 5000



4333.61

«Լենինի զրոշով մենք հաղթեցինք Հոկտեմբերյան հեղափոխության համար մղվող մարտերում:

Լենինի զրոշով վճռական նվաճումներ կատարեցինք սոցիալիստական շինարարության հաղթանակի համար մղվող պայքարում:

Այդ հույսն զրոշով ել կհաղթանակենք պրոլետարական հեղափոխության մեջ ամբողջ աշխարհում:

Կեցցե՛ Լենինի զմր:

(Կենտկոմի քաղ. զեկուցման յեզրափակիչ խոսքերը ՀՍՄԿ(բ) XV համագումարում):

I

Մոտ քառորդ դար սրանից առաջ Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքս» ժողովածվում ի հոգված ղետեղեց «Մարքսիզմ և ռեվոլյուցիոնիզմ» վերնագրով, վորի մեջ զարմանալի պարզորոշությամբ ցույց ե տրված Մարքսի հեղափոխական ուսմունքի պայքարի ու հաղթանակի ուղին՝ ընդդեմ իրեն թշնամի հոսանքների թե բուրժուական զիտության, և թե ել այն ուսմունքների մեջ, վոր բուրժուազիայի ազենտները տարածում են բանվոր դասակարգի չարքերում:

Պայքարի ընթացքի, Մարքսին «հերքելու» ձևերի, մարքսիզմն աղավաղելու և խեղաթյուրելու միջոցների, ինչպես և բանվոր դասակարգի խեղաթյուրելու իրենց ուղիների հետևողական—հեղափոխական պաշտպանության արդյունքների չափազանց վերին աստիճանի ուսանելի յե նաև մեր օրերի համար, յերբ լայն ծավալով, միջազգային մասշտաբով կատարի պայքար ե լենինիզմին՝ այ-

սինքն «իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխութ-
յուններին շրջանի մարքսիզմին» (Ստալին) թեր և դեմ :

«Հայտնի ասացվածք կա, թե՝ յերկրաչափական
աբսոլուտները հավանորեն կհերքվեյին, յեթե նրանք
չոչափեյին մարդկանց չահերը... Զարմանալի չէ,
վոր Մարքսի ուսմունքը, վորն ուղղակի ծառայում
է ժամանակակից հասարակության առաջավոր դա-
սակարգի լուսավորության և կազմակերպման գոր-
ծին, ցույց է տալիս այդ դասակարգի խնդիրները և
ապացուցում է, վոր—տնտեսական դարգացման հի-
ման վրա—այժմյան հասարակակարգը անխուսա-
փելիորեն պետք է փոխարինվի նոր կարգերով,—
դարմանալի չէ, վոր այդ ուսմունքն ստիպված է
կոպով տիրանալու իր կյանքի ամեն մի քայլին» :

Այս խոսքերով է սկսվում Լենինի հիշյալ հոդվածը :
Բուրժուական դասակարգի շահերի տեսակետից շատ
լնական և որինական հարձակում սկսեցին Մարքսի ուս-
մունքի վրա նույն յեռանդով «և՛ յերիտասարդ գիտնա-
կանները, վորոնք իրենց համար կարելի էին ստեղծում
ոռցիալիզմը հերքելով, և՛ հնամյա ծերուկները, վորոնք
պահպանում էին ամեն տեսակի հնացած սխառմաների
պատվիրանը» :

Մարքսիզմի դեմ սկսած այդ բուրժուական յելույթ-
ներն ավելի հաճախակի էին դառնում ու սրվում այն
չափով, վորչափով աճում էր մարքսիզմը, ծավալվում
ու ամրապնդում էին նրա դադափարները բանվոր դա-
սակարգի մեջ : Մարքսիզմի, վորպես պատմության ծա-
գույ դասակարգի պրոլետարիատի—իդեոլոգիայի յերե-
վան յեկավ նրանով, վոր ամեն անգամ, յերբ բուրժուա-
կան «գիտնականները» «հերքում» ու «վոչնչացնում» էին

մարքսիզմը, նա ավելի ամուր, կոպիւած ու հաստատուն
էր դառնում :

Ներքին Ֆրոնտում, առավելապես պրոլետարիատի
մեջ տարածված և բանվորական շարժման հետ կապված
ուսմունքների մեջ ևս մարքսիզմն ամրապնդեց իր դիրքը՝
դադափարական համառ պայքար մղելով բազմաթիվ հա-
կառակորդներին դեմ : Կես դարից ավելի յե անցել, ինչ
ընդհանուր առմամբ ավարտել է մարքսիզմի հաղթանակը
բանվոր դասակարգի պայքարի հետ կապված այլ ուս-
մունքների դեմ :

1899 թվին, վորպես միջազգային պրոլետարիատի
հեղափոխական կազմակերպություն ստեղծված II Ին-
տերնացիոնալը բոլոր էյական հարցերում անմիջապես
կանգնեց մարքսիզմի հողի վրա :

Սակայն, այդ հաղթանակը չէր նշանակում, թե
դադարել է պայքարը :

«Յերբ մարքսիզմը դուրս մղեց իրեն թշնամի՝ բու-
լոր շատ թե քիչ ամբողջական ուսմունքները,—ա-
սում է Լենինը,—այն տենդենցները, վորոնք արտա-
հայտվում էին այդ ուսմունքների մեջ, սկսեցին այլ
ճանապարհներ վորոնել իրենց համար : Փոխվեցին
պայքարի ձևերն ու առիթները, բայց պայքարը շա-
րունակվում էր : Յեվ մարքսիզմի գոյության յերկ-
րորդ կիսադարը (անցյալ դարի 90-ական թվական-
ները) սկսվեց մարքսիզմի ներսում՝ մարքսիզմին
թշնամի հոսանքի պայքարից : Նախկին որթողուք
մարքսիստ Բերնշտեյնը կնքեց այդ հոսանքի անունը,
հանդես գալով ավելի մեծ աղմուկով, Մարքսին
ուղղելու, Մարքսին վերանայելու, ռեվիզիոնիզմի
ամբողջական արտահայտությամբ» :

Այդ ժամանակից սկսած նախամաքսիստ սոցիա-
լիզմը, վոր իր սահմաններում ջախջախվել էր բաց կոպի

մեջ, շարունակում ե պայքարը, բայց արդեն վոչ թե ինքնուրույն հողի վրա, այլ մարքսիզմի սահմաններում, վարպես ռեվիզիոնիզմ աջից ու «ձախից»: Ըստ եյուլթյան չընդունելով Մարքսի հեղափոխական ուսմունքը, բացասելով նրա գլխավոր գաղափարները, աղավաղելով նրա հիմնական դրույթները, ռեվիզիոնիստները անդադար յերգվում եյին Մարքսի անունով և նույնիսկ իսկական մարքսիստներ կոչվելու հավակնություն ունեյին: Կարելի չե ասել, վոր ինչքան ռեվիզիոնիստներն ավելի չատ եյին կտրվում մարքսիզմից, ինչքան ավելի խորն եյին խրվում ռուրտունիզմի ճահճի մեջ, այնքան ավելի յեռանդով եյին նրանք աշխատում ծածկել իրենց ունեւատական նահանջը, իրենց դավաճանությունը սոցիալիզմին՝ Մարքսի անունով, ցիտատներ բերելով նրանից և այլն: Կատարվում եր այն, ինչ վոր չատ անգամ մատնանչել ե Լենինը իր մյուս հոդվածներում:

«Պատմության դիալեկտիկան այնպես ե, վոր մարքսիզմի տեսական հաղթանակը ստիպում ե իր թշնամիներին մարքսիստի շորեր հաղնելու: Ներսից փտած լիբերալիզմը փորձում ե կենդանացնել իրեն, վորպես սոցիալիստական ռուրտունիզմ»:

«Պատմության մեջ միշտ այնպես ե յեղել, վոր ճնշված դասակարգերի մեջ ժողովրդականացած հեղափոխական առաջնորդների մահից հետո նրա թշնամիները փորձել են յուրացնել նրա անունը՝ ճնշված դասակարգերին խաբելու համար»:

Ինչ եր նախապատերազմյան ռեվիզիոնիզմի գաղափարական բովանդակությունը, վոր քայքայեց II ինտերնացիոնալի շարքերը և խայտառակ փլուզումի հասցրեց նրան իմպերիալիստական կրակով փորձվելու սուր դրամենտին: Այս հարցը ներկայումս վոչ միայն պատմա-

կան, այլև գործնական տեսակետից չատ հետաքրքրական ե:

Յեթե վոչ նախապատերազմյան տիպի ռեվիզիոնիզմի դրույթներն ամբողջապես, այսպ նրա մտքերի ընթացքն ու ուղղությունը նման են ներկայիս ռեվիզիոնիստների տեսական դրույթին, վորոնք նահանջում են ժամանակակից մարքսիզմի-լենինիզմի գաղափարներից:

Այն «ուղղումները», վոր ռեվիզիոնիստները մրտցնում եյին Մարքսի ուսմունքի մեջ, ինչպես Լենինն ե նշում, ընթանում եյին յերկու տարբեր գծերով: Տնտեսական ասպարիզում ռեվիզիոնիստները փորձում եյին մարքսիզմն ուղղել «սոստեսական դարգացման նոր տրվյալներին» ողնությամբ: Ռեվիզիոնիստներն «ասպացուցում եյին», վոր դյուդաանտեսության ասպարիզում համակենտրոնացում տեղի չի ունենում, և խոշոր արտադրությունը մանրին դուրս չի մղում: Ռեվիզիոնիստները հավատացնում եյին, թե «կարտեչներն ու տրեստները ճգնաժամերը բոլորովին վերացնելու հնարավորություն կտան», պնդում եյին, թե «դասակարգային հակասությունների թուլացման յեկ մեղմացման տենդենց» ե նկատվում և այլն:

Ասպացուցված եր, ասում ե Լենինը, վոր ռեվիզիոնիստները սխտեմատիկաբար դունավորում են մանր արտադրությունը, վոր այդ հարցում նրանք մեղանչում են գիտական տեսակետից, մակերեսորեն ընդհանրացնելով միակողմանի կերպով վերցրած փաստերը:

Իսկ քաղաքական տեսակետից նրանք մեղանչում եյին նրանով, վոր անխուսափելիորեն, կամա թե ակամա, դյուդացուն կոչ եյին սնում, կամ դյու-

դացուն մղում եյին դեպի սեփականատիրոջ տեսա-
կետը (այսինքն՝ բուրժուազիայի տեսակետը),
փոխանակ նրան մղելու դեպի հեղափոխական պրո-
լետարի տեսակետը»:

Մի՞թե ճիշտ չէ, վոր ժամանակին են հնչում Լենինի
այս խոսքերն այժմ, յերբ կուլակային ագենտուրան
Լենինի կուսակցութեան մեջ կրկնում է հին յերգը նոր
յեղանակով, ռեվիզիոնիզմի ծանոթ «յերիտասարդական
մեղքերը» վերաբրտադրում է նոր հիմունքներով:

Պակաս ժամանակին չի հնչում Լենինի հողվածի
նաև հետևյալ մասը, վորով նա հեղնում է ռեվիզիո-
նիստներին, վորոնք փորձում եյին վերանայել կրիզիս-
ների մարքայան թեորիան այն ուղղութեամբ, վոր հայտ-
նի յե այժմ տխրահուշակ «կազմակերպված կապիտա-
լիզմ» տերմինով:

Ահա թե ինչ է ասել դեռ այն ժամանակ Լենինը.—

«Միայն շատ կարճ ժամանակ և միայն ամենա-
կարճատես մարդիկ կարող եյին մտածել Մարքսի
ուսմունքի հիմունքները վերափոխելու մասին՝ ար-
դյունաբերութեան վերելքի ու ծաղկման մի քանի
տարիների ազդեցութեան տակ: Վոր ճգնաժամերի
չըմանը դեռ չի վերջացել, այդ շատ արագ ցույց
ավեց ռեվիզիոնիստներին իրականութունը: Ծաղի-
ման չըմանից հետո վրա հասավ ճգնաժամը: Փոխ-
վեցին առանձին ճգնաժամերի ձևերը, հետևի-
ղականութունը, պատկերը, բայց ճգնաժամերը
մնացին կապիտալիստական կարգերի անխուսափելի
ու հիմնական մասը: Կարտելներն ու տրեստները,
համախմբելով արտադրութունը, միաժամանակ
բոլորի աչքի առաջ ուժեղացնում եյին արտադրու-
թեան անարխիան, սրբոլորարիատի անապահովու-
թյունն ու կապիտալի լուծը: Այդպիսով նրանք սը-
րում եյին դասակարգային հակասութունները՝

մինչեւ այդ չտեսնված չափով: Վոր կապիտալիզմը
դեպի կործանում է գնում, — թե՛ առանձին քաղաքա-
կան ու տնտեսական ճգնաժամերի իմաստով և թե՛
ամբողջ կապիտալիստական հասարակարգի լիա-
կատար խորտակման իմաստով, — այդ առանձին
ափսոսութեամբ և լայն չափերով ցույց տվին հենց
նորագույն հսկայական տրեստները: Մոտ անցյալի
Ֆինանսական կրիզիսն Ամերիկայում, գործադրկու-
թեան սարսափելի սրումն ամբողջ Յեվրոպայում,
չխոսելով արդեն մոտալուտ արդյունաբերական ճգ-
նաժամի մասին, վոր յերևում է բազմաթիվ նշան-
ներից, — այս ամենն այնտեղ հասցրեց, վոր ռեվի-
զիոնիստների մոտիկ անցյալի «թեորիաները» մո-
ռացան բոլորը, կարծյոք, հենց իրենցից շատերը:
Միայն, չպետք է մոռանալ այն դասերը, վոր բան-
վոր դասակարգին տվեց այդ ինտելիգենտական ան-
կայունությունը»:

Իզուր չանցան բանվոր դասակարգի համար այն
ծանր դասերը, վոր տվեց ռեվիզիոնիզմի քաղաքական
պրակտիկան: Ռեվիզիոնիստական քաղաքականութեան
հիմնական սկզբունքն է՝ իր վերաբերմունքը վորոշել
դեպքից դեպք, հարմարվել հանդամանքներին, որվա
դեպքերին, քաղաքական մանրունքների ընթացքին,
մոռանալ սրբոլորարիատի հիմնական շահերը, այդ հիմ-
նական շահերը զոհաբերել բոլորի իրական կամ յենթա-
դրական շահերին: Բոլոր ոսլորոտնիստներին հատուկ
այս դրույթն ամբողջ աշխարհի բանվոր դասակարգին
հսկայական վնաս է պատճառել և դեռ շարունակում է
պատճառել:

Ռեվիզիոնիստական քաղաքականութեան կրկնու-
թյունը զանազան արտահայտություններով նկատվում է

ամեն տեղ, մինչև վերջին որերը : Վորովհետև, ինչպես
Լենինն եր բացատրում .—

«...այդ քաղաքականության բուն ելույթունից
բղխում ե, վոր նա կարող ե ընդունել անհամար բազմ-
ապիսի ձևեր, և վոր դեպքերի ամեն մի փոքր ի
չատե անսպասելի ու չնախատեսված փոփոխու-
թյունը անխուսափելիորեն կառաջացնի ռեվոլյու-
նիզմի այս կամ այն տարածաշրջանում, թեկուզ և
այդ շրջադարձը չառ փոքրիկ չափով՝ և չառ կարճ
ժամանակով փոխելու լինի դարգացման հիմնական
գիծը^{*)}» :

Ինչով և պայմանավորվում ռեվոլյուցիոնիզմը՝ ինչպես
աջից, այնպես ել «ձախից», նրա կրկնողականությունը
զանազան ձևերով, դարգացման զանազան շրջաններում :

«Ռեվոլյուցիոնիզմի անխուսափելիությունը, —ասում
ե Լենինը, —պայմանավորվում ե նրա դասակարգա-
յին արմատներով ժամանակակից հասարակության
մեջ : Բոլոր կապիտալիստական յերկրներում պրո-
լետարիատի կողքին միշտ ել կանգնած են մանր
բուրժուական և մանր սեփականատերերի լայն խա-
վերը : Կապիտալիզմը ծնվել և և շարունակ ծնվում ե

^{*)} Այդ նույն միտքը Լենինն արտահայտել և 13 տարի հետո,
ուրիշ ձևով, ռադական կոմունիզմից նեղ-ին անցնելու ժամանակ
լենինյան կուսակցության ներքին տառապանքների ասթիվ «Պատ-
մության ամեն մի յուրահասուկ շրջադարձը, —գրում ե Լենինը, —
վորոշ փոփոխություն ե մտցնում մանր-բուրժուական այն տա-
ռապանքների ձևի մեջ, վորոնք միշտ տեղի յեն ունենում պրոլե-
տարիատի կողքին և միշտ այս կամ այն չափով թափանցում ե
պրոլետարիատի շարքերը... Դրանք անխուսափելի յեն, քանի
դեռ չեն վերացված կապիտալիզմի ամենախոր արմատները : Նրանց
ձևն այժմ փոխվում ե խորհրդային իշխանության տնտեսական
քաղաքականության հայտնի շրջադարձի հետևանքով : (Տես Նոր
ժամանակները, հին սխալները նոր ձևերով և ոգով, Թիֆլիս, 1932 թ.,
XVIII մաս 1, յերես 352) :

մանր արտադրությունից : Կապիտալիզմը անխուսա-
փելիորեն նորից ստեղծում ե «միջին խավերի» մի
ամբողջ շարք (գործարանի յրացուցիչ աշխատանք,
տանը կատարվող աշխատանք, մանր արհեստանոց-
ներ, վորոնք տարածվում են ամբողջ յերկրում,
նկատի ունենալով խոշոր, որինակ՝ հեծանիվային
ու ավտոմոբիլային ինդուստրիայի պահանջը և
այլն) : Այս նոր մանր արտադրողներն ել անխուսա-
փելիորեն կրկին անցնում են պրոլետարիատի շար-
քերը : Միանգամայն բնական ե, վոր մանր բուրժու-
ական աշխարհահայացքն ել նորից թափանցում ե
բանվորական լայն կուսակցությունների շարքերը :

Լենինը դեռ այն ժամանակ—1908 թվին նախատեսել
ե, վոր, չնայած մարքսիզմի հաղթանակին բանվորական
շարժման ներսում յեղած այլ հոսանքների դեմ, չնայած
վոր բոլորի կողմից «ընդունված ե» (խոսքով) Մարքսի
ուսմունքը, այնուամենայնիվ, պրոլետարական հեղա-
փոխության շրջանում ավելի լայն ու անողոք կերպով
կծավալվի պայքարը՝ հանուն իսկական, գործունակ
մարքսիզմի, հանուն գլոտական սոցիալիզմի գաղափար-
ների կիրառման կյանքում :

«Այն, ինչ մենք այժմ ասլում ենք հաճախ միայն
դադախարապես, —Մարքսի ուսմունքի տեսական
ուղղումների վեճերը, —այն, ինչ այժմ գործնակա-
նում նկատվում ե միայն բանվորական շարժման ա-
ռանձին հարցերի նկատմամբ, վորպես տակտիկա-
կան տարածաշրջանների ռեվոլյուցիոնիստների հետ
և պառակտումներ այդ հոգի վրա, —այդ ամենը
բանվոր դասակարգը անշուշտ դեռ տրիտի ասլի ավե-
լի խոշոր չափերով, յերբ պրոլետարական հեղափո-
խությունը կսրի բոլոր վիճելի հարցերը, կկենտրո-
նացնի բոլոր տարածաշրջաններն այն կետերի
շուրջը, վորոնք ամենաանմիջական նշանակությունն

ունեն մասսաների ընթացքը վորոշելու համար, կտրիպի պայքարի բուն շրջանում թշնամիներին ջոկել բարեկամներից, դուրս չպրտել վատ դաշնակիցներին՝ թշնամուն վճռական հարվածներ հասցնելու համար»:

Այդ՝ ամեն տեսակետից նշանավոր հոգևածը վերջանում է հետեվյալ մարզարեյական բառերով.

«XIX դարի վերջին տեղի ունեցող հեղափոխական մարքսիզմի և ռեվոլյուցիոնիզմի գաղափարական պայքարը միայն նախադուռն է պրոլետարիատի հեղափոխական հսկա ընդհարումների, պրոլետարիատի, վոր հակառակ քաղքենիության բոլոր տատանումներին ու թուլություն, առաջ է դնում դեպի իր գործի լիակատար հաղթանակը»:

Այս հոգևածը գրելուց վեց տարի հետո բռնկվեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմը, վորի ժամանակ յեվրոպական սոցիալիզմի ռեվոլյուցիոնիստական, ուղորտունիստական թեք վերջնականապես դավաճանեց սոցիալիզմին ու դնաց դեպի շովինիզմ: Մարքսին «ուղղելու» նախկին յերկշուտ-խեղկատակ փորձերի տեղը բռնեց մարքսիզմի ցինկիորեն բացահայտ Փալսթիկացիան (աղավաղումը):

«Պատերազմը, — գրում եր Լենինը 1915 թվին, — կերպարանափոխեց տասնյակ տարիներով աճած ուղորտունիզմը, հասցրեց նրան ամենաբարձր աստիճանին, չառացրեց նրա յերանգների թիվին ու բազմապիսուսությունը, հարստացրեց նրանց փառատարկումները մի ամբողջ կույտ նոր սովետություններով, այսպես առած՝ ուղորտունիզմի հիմնական առվին խառնեց բազմաթիվ նոր վտակներ ու հոսանքներ, սակայն հիմնական առուն չանհետացավ»:

Ուղորտունիզմն այն աստիճան հասունացավ, վոր

«անհնարին դարձավ այդ բուրժուական խոցի գոյութությունը առավյա նման, սոցիալիստական կուսակցությունն ներսում»: Սոցիալ-դավաճանական II Ինտերնացիոնալը պարտություն կրեց: Միջազգային սոցիալիզմի գործը, հետևողական, որթողութ (ուղղափառ) մարքսիզմի գործը վերկեցին բայլշեվիկները — Լենինիստները, վորոնք նոր, III Ինտերնացիոնալի շուրջը համախմբեցին այն ամենը, ինչ վոր մարտական է, հեղափոխական և անձնուրաց ամբողջ աշխարհի բանվոր գասակարգի մեջ:

Բայլշեվիզմն այս խոչորագույն հեղափոխական խնդիրն իրագործել կարողացավ միմիայն շնորհիվ այն բանի, վոր սկսած իր սկզբնավորությունից և իր ամբողջ հերոսական պայքարի ընթացքում անչեղուն կանգնած մնաց հեղափոխական մարքսիզմի զբանխոյա տեսական բաղայի վրա: Բայլշեվիզմի ստեղծագործողն ու առաջնորդը — Վ. Ի. Լենինն իր տեսական անմահ աշխատությունների մեջ վերականգնել, խորացրել, դարգացրել ու հարստացրել է Մարքսի ուսմունքը: Իսկ մարքսյան հեղափոխական դիալեկտիկայի սկզբունքներով տողորված բայլշեվիզմի անորինակ պլախտիկան սղահոյեց պրոլետարական հեղափոխություն ու սոցիալիզմի շինարարություն հաղթանակը թորհուրդների յերկրում, ցույց տալով մարքսիզմը գործողություն մեջ և կիրառելով կյանքում նրա հիմնական գաղափարները:

Հոկտեմբերյան հեղափոխություն հաղթանակը վոչ միայն խորտակեց բուրժուալիայի իշխանությունը, այլև տապալեց բոլոր «սոցիալիստական» (իր թե տոցիալիստական) հոսանքները, վորոնք փորձում էին բանվորական շրջաններում մրցել բայլշեվիզմի, 109-

սինքն՝ մարքսիզմ—լենինիզմի հետ։ Հակաբայլշևիկյան կուսակցություններն ու խմբաշրջումներն արդեն մերկացված են կյանքում, վորպես բուրժուական գործակալություն բանվոր դասակարգի մեջ։ Լենինիզմը դարձել է կոմունիզմի համար մղվող պրոլետարական պայքարի դրոշ, Լենինյան Համ. Կ(բ) Կ—մեր յերկրի հեղափոխական պրոլետարիատի միակ կուսակցությունը, Լենինյան Կոմիտեները՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության գլխավոր շտաբը։

Այստեղ ել կրկնվեց նույնը, ինչ վոր կատարվեց այն ժամանակ, յերբ մարքսիզմը հաղթանակ տարավ բանվոր դասակարգի պայքարի։ Ի՞նչու կապված մյուս ուսմունքներին դեմ։ Իրենց համար սկսեցին այլ ուղիներ վորոնել այն տեղեկեցները, վոր արտահայտվում էլին այդ ուսմունքների մեջ, բայց տապալվել էլին բաց կռվում։ Մենշևիկզմը, եսեռովչինան, անարխո-օրիգինալիզմը, վորոնք մեր—պրոլետարական զիկտատուքայի յերկրում զրկվել են իրենց ինքնուրույն տերրիտորիայից, գաղտագողի մտնում են լենինիզմի սահմանները և շարունակում են պայքարն արդեն վորպես ռեվիզիոնիզմ կամ (վոր նույնն է) ուկլոնիզմ (թեքում) Լենինյան կուսակցության ներսում։ Համ. Կ(բ) Կ ներսում յեղած ներկուսակցական ամբողջ պայքարը, սկսած 1918 թվի «ձախ կոմունիստներից» և վերջացրած Սիրցով—լուի—նաճեյակյան աջ—«ձախ» բլոկով, վոչ այլ ինչ են, բայց յեթե Լենինիզմի հոսանքների պայքարը Լենինիզմի ներսում։

Մարքսիզմի ռեվիզիոնիստների նման Լենինիզմի ռեվիզիոնիստներն էլ ուժեղ թափով «ուղղում են» Լենինին, աղավաղելով նրա հիմնական ուսմունքը թե՛ տնտե-

սական և թե քաղաքական ասպարիզում։ Ռեվիզիոնիստների նման նրանք Լենինիզմը կեղծում են, հենվելով Լենինին վրա, ցիտատներ բերելով նրանից և այլն։ Ռեվիզիոնիստների նման մեր ուկլոնիստներն էլ հեռանալով Լենինիզմից, կտրելով իրենց կապը Լենինիզմի հետ, նույնիսկ անցնելով պրոլետարիատի դասակարգային թշնամու դիրքերը, հավակնություն ունեն իրենց վերապահելու իսկական Լենինիստներ կոչումը, իրենց համարելու Լենինյան իրավահաջորդներ, Լենինիզմի լավագույն մեկնաբանողներ, Իլլիչի ավանդները պահպանողներ...

Սակայն, պատմությունը կրկնվում է և այլ տեսակետից։ Ինչպես իր ժամանակ մարքսիզմը թշնամիների հետ կատաղի կռվի բռնվելով, ծերունի Վիլհելմ Լիբկներիստի պատկերավոր արտահայտությամբ «պարարտացնում եր իր ամուր մկաններն ու կարմիր այտերը», այնպես էլ ներկայումս Լենինիզմն որեցոր աճում ու ամրանում է դասակարգային թշնամիների ու մեր կուսակցության թիկունքում նրա արտացոլումների՝ ու պրոտունիզմի զանազան տեսակների, ներկա մեջջանական տատանումների ու թեքումների դեմ մղվող պայքարում։

II

Մարքսիզմ—Լենինիզմի ամեն մի վերաքննություն, յոջից է զալիս այն, թե «ձախ»-ից, արտահայտում է մանր բուրժուազիայի ձգտումներն ու տրամադրությունները, վորը ամուր չընդապատելով պրոլետարիատին, ծծվում է նրա շարքերը, ճնշում, նեղում է նրա առանձին շերտերին, փչացնում նրա աշխատանքը։ Իր արմատներով սնվելով մանր-բուրժուական աղբյուրից,

մարքսիզմ-լենինիզմի ռեվոլյուցիոն իր սոցիալական ելու-
թյամբ աջ ուպոգիզիա յե կոմունիզմի հանդեպ: Վորով-
հետե, ինչպես հայտնի յե, միակ իսկական ձախ, այ-
սինգն՝ հեղափոխական դասակարգը ժամանակակից
հասարակության մեջ պրոլետարիատն է: Յեւ միակ
իսկական պրոլետարական իդեոլոգիան Մարքս-Լենինի
ուսումնքն է: Մանր բուրժուական ռեվոլյուցիոնիզմը (կամ
ուպոռտունիզմը) ինչպիսի ուշտրա ձախ ձեւեր եւ ընդու-
նի, որ յեկտիվորեն նա քաշում է դեպի աջ, այսինքն՝
կոմունիզմից դեպի կապիտալիզմ: Սակայն, բանվո-
րական միջավայրում դոյուլթյուն ունեն մանր-բուր-
ժուական տատանումների յերկու հիմնական ձեւեր,
կամ յերկու «վտակներ»: Դրանք են, ինչպես Լենինն է
ասել,

«...մանր-բուրժուական ռեֆորմիզմը, այսինքն՝
դեմոկրատական ու «սոցիալ»-դեմոկրատական
դեղեցիկ ֆրազներով և անզոր ցանկություններով
քողարկված լաքեյություն բուրժուազիայի առաջ,
և մանր-բուրժուական հեղափոխականություն,
վոր խոսքով ասեղ է, փքուն ու պարծենկոտ, իսկ
գործով՝ ցած ու ցրվւ, փոշիացած և անզուխ*):»:

Մեր կուսակցության ներսի այդ յերկու «վտակ-
ները» ընկ. Ստալինը XVI կուսհամագումարում բնորո-
շել է վորպես մի կողմից մանր-բուրժուական լիբերա-
լիզմ: Պրոլետարիատի իդեոլոգիայի հանդեպ առաջա-
ցած այդ յերկուսնական մանր-բուրժուական ուպոգի-
զիաների արտաքին տարբերությունն այն է, վոր լիբե-
րալները հանդես են դալիս բացահայտ աջ պլատֆոր-
մայով, մինչդեռ ռադիկալները իրենց աջ ելությունը

*) Լենին-Յերկ. Ժող. 1924 թվի հրատար. հատ. XVIIII
մաս I, յեր. 353:

ծածկում են հեղափոխական լոգունդների ձախ դիմա-
կով:

Կենտկոմի նոյեմբերյան (1928 թ.) պլենումում ընկ.
Ստալինը այդ արտաքին տարբերությունների մասին
ասում եր.

«Դեպի տրոցկիզմը թեքվող մարդիկ եյապես
նույն աջությունն են անում, միայն պիտի առել,
վոր այդ աջերը քողարկվում են «ձախ» ֆրազներով:
Այստեղից ել հետևում է, վոր պիտի պայքարել
յերկու ֆրոնտում ել՝ և՛ աջ թեքման դեմ, և՛ «ձախ»
թեքման դեմ: Կարող են ասել. յեթե «ձախ» թեքումը
իր ելությամբ նույն աջ ուպոռտունիստական թե-
քումն է, ապա ել վորն է նրանց տարբերությունը և
ել ուր է այստեղ յերկու ֆրոնտ: Իսկապես յեթե ա-
ջերի հաղթանակը կապելացնի կապիտալիզմի ռես-
տավրացիայի շանսերը, իսկ «ձախերի»՝ հաղթա-
նակն ել նույն հետևանքներին է հասցնում, ապա ել
վորն է նրանց տարբերությունը, և ինչու մեկին աջ
ենք անվանում, և՛ յուսին՝ «ձախ»: Տարբերությունն
այն է, վոր նրանց պլատֆորմը տարբեր է, պահանջ-
ները, մոտեցումն ու պայքարի ձեւերը սարբեր են:
Որինալ՝ յեթե աջերն ասում են «հարկավոր չեր
Դնեպրոստրոյը կառուցել», իսկ «ձախերն» ընդհա-
կառակը, առարկում են «մի Դնեպրոստրոյն ի՞նչ
է, յեկեք մենք տարեկան մի Դնեպրոստրոյ կառու-
ցենք», ապա պետք է խոստովանել, վոր ինչպես
յերևում է, տարբերություն կա: Յեթե աջերն ա-
սում են՝ «Ձեռք մի տաք կուրակին, թողեք, վոր
նա աղատ աճի», իսկ «ձախերն», ընդհակառակն,
ասում են «հարվածիւր վոչ միայն կուլակին, այլ և
միջակին, վորովհետև նա ել նույնպիսի մասնավոր
սեփականատեր ե», ապա պիտի բնորոշել, վոր
տարբերություն կա:

Չանազան չլծաններում առաջին պլանն են անցնում

43333-13



մանր-բուրժուական ուղղիցիայի մեկ այս, մեկ այն ձև-
վը, վոր մտել է լենինիզմի սահմանները: Հոկտեմբեր-
յան հեղափոխությունից հետո 10 տարվա ընթացքում
ուղղիցիոն յեղույթները մեր կուսակցության ներսում
զարգարվում էին «ձախ» փետուրներով, վորձելով ող-
տագործել խորհրդային բանվորների բացառիկ հեղա-
փոխականությունը:

Այդ բացատրվում է նրանով, վոր մեր բանվոր-
ներն ուղղակի չեն լսի բացարձակ ուղորտունիստին,
ուստի «հեղափոխական» դիմակավորումն այն լուս-
բուսիկ միջոցն է, վորը գոնե արտաքուստ կդարձի
բանվորների ուշադրությունը և վստահություն
կներշնչի նրանց մեջ դեպի ուղղիցիան»^{*)}:

Մանր բուրժուական ուկլոնիզմի «ձախ» տեսակն
իր գաղաթնակետին հասավ 1926 թվին զանազան ուղ-
ղիցիաների բեկորների միացյալ բլուկի ձևով, վորոնց
ժամանակին ջախջախել եր կուսակցությունը:

Այդ ժամանակ կուսակցությունը գլխավոր կրակն
ուղղեց «ձախ» դիմակավորների վրա, վորոնք հանդես
եյին յեկել տրոցկիզմի ընդհանուր հովանավորության
տակ, վորը մանր-բուրժուական ուկլոնիցիոնիզմի ա-
մենացայտուն տեսակն էր:

Իր հակահեղափոխական ամբողջ եյուլթյունը հրա-
պարակ հանած տրոցկիզմի մերկացումից ու ջախջախու-
մից հետո ներկա շրջանում գլխավոր վտանգը աջ թե-
քումն է, վոր արտահայտում է կուլակ-կապիտալիս-
տական տարրերի դիմադրությունը լենինյան կուսակ-
ցության գլխավոր դծին:

Ահա թե ինչ եր ասում այդ մասին ընկ. Ստալինը

*) ՄՏԱԼԻՆ — Նորից սոցիալ-դեմոկրատական թեքման մասին
մեր կուսակցության մեջ:

կուսակցության Մոսկվայի Կոմիտեյում Ուզլանովչի-
նան հայտարարելուց հետո (1928 թ.): Մատնանշելով,
վոր այդ յերկու վտանգներն էլ, թե աջ և թե «ձախ»
թեքումները յերկուսն էլ միևնույն հետևանքին են հա-
ցնում, թեկուզ և տարբեր ծայրերից, ընկ. Ստալինը
պատասխանում է այն հարցին, թե վորն է այդ յերկու
վտանգներից ավելի վատը:

«Յես կարծում եմ, վոր յերկուսն էլ վատ են: Այդ
յերկու թեքումների դեմ պայքարելու տեսակետից
նրանց մեջ յեղած տարբերությունն այն է, վոր
ներկա շրջանում «ձախ» թեքումն ավելի պարզ է
կուսակցության համար, քան թե աջը: «Ձախ» թեք-
ման դեմ, արդեն մի քանի տարի յե, ինչ ուժեղ
պայքար է մղվում, և պարզ է, վոր այդ հանգա-
մանը չեր կարող ի դուր անցնել կուսակցության
համար: Հասկանալի յե, վոր կուսակցությունը
«ձախ» տրոցկիստական թեքման դեմ պայքարելիս
չատ բան է սովորել և արդեն նրան չի կարելի հեշ-
տությամբ խաբել ձախ Ֆրադներով: Ինչ վերաբե-
րում է աջ վտանգին, վորը առաջ էլ գոյություն ու-
ներ, ըսյց այժմ ավելի բացահայտ կերպով է հան-
դես գալիս անցյալ (1927) տարվա մթերմն կրի-
զիսի պատճառով մանր-բուրժուական տարերքի
ուժեղացման հետևանքով, յես կարծում եմ, վոր
նա (աջ թեքումը) այնքան էլ պարզ չի մեր կու-
սակցության վորո՞չ չերտերի համար: Դրա համար
էլ մեր խնդիրն է՝ մալաչափ անգամ չթուլացնելով
պայքարը «ձախ» տրոցկիստական վտանգի դեմ,
չեչտը դնել աջ թեքման դեմ մղվող պայքարի վրա
և բոլոր միջոցները ձեռք առնել, վոր այդ թեքման
վտանգավորությունն էլ կուսակցության համար
եռւնքան պարզ լինի, ինչքան պարզ է տրոցկիս-
տական վտանգը»^{*)}:

*) ՄՏԱԼԻՆ — 1928 թ. Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվայի վճ. ի
պլենումում արտասանած ճառից:

Թե աջ և թե «ձախ» հոսանքների՝ լենինիզմի վե-
րաքննութեան պլատֆորմի ու մեթոդների համադրումը
պարզ ցույց է տալիս ժամանակակից ռեֆորմիզմի հա-
կապը լեւոնական ելույթները, վորի վերացումը սո-
ցիալիզմի հաղթանակի անհրաժեշտ պայմանն է թե՛ մեզ
մոտ և թե ամբողջ աշխարհում:

Տնտեսական ասպարիզում «ձախ ռեվոլյուցիոնիստնե-
րը» հարվածում են մեր յեթկրում սոցիալիզմ կառուցե-
լու հնարավորութեան հիմնական հարցը:

Լենինի այս դրույթն այն հիմնական լրացումներից
մեկն է, վորոնցով լենինիզմը հարստացրեց նախնի-
պերիալիստական շրջանի մարքսիզմը: Պատմական նոր
պայմաններում, պրոլետարիատի դասակարգային պայ-
քարի նոր փորձի հիման վրա Լենինը, մարքսիստական
մեթոդի ոգնութեամբ ապացուցեց, վոր հնարավոր է
սոցիալիզմի կառուցումը մի յերկրում:

Ըստ ելույթի այդ հարցի շուրջը յեղած տարա-
ձայնութեանները մեր կուսակցութեան մեջ հանգում
են հետեյային.

«Կուսակցութեանը, կազմակերպելով Հոկտեմ-
բերյան հեղափոխութեանը, այն տեսակետին էր,
վոր հնարավոր է «սոցիալիզմի հաղթանակը սկզբ-
բում քիչ թվով յերկրներում, կամ նույնիսկ մի ա-
ռանձին վերջրած կապիտալիստական յերկրում»,
վոր «այդ յերկրի պրոլետարիատը հաղթելով, էքս-
պրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստնե-
րին և իր յերկրում կազմակերպելով սոցիալիստա-
կան արտադրութեանը», կարող է յեւ պետք է
կանգնի «ընդհանր մնացած կապիտալիստական աշ-
խարհին, իր կողմը դրաւելով մյուս կապիտալիս-
տական յերկրներին ճշգլած դասակարգերին, ապա-
ստաւորութեանը բարձրացնելով նրանց մեջ կապի-
տալիստների դեմ և անհրաժեշտութեան դեպքում
ոգնութեան համակցելով նրանց նույնիսկ ռազմական
ուժով՝ ընդդեմ չահագործող դասակարգերի ու
նրանց պետութեաններին»*):

Գլխավոր ռեվոլյուցիոնիստ Տրոցկին դեռ 1915 թվից
սկսած դեմ էր դուրս գալիս լենինյան այս դրույթնե-
րին, պնդելով, թե «հեղափոխական Ռուսաստանը չի
կարող դիմանալ կոնսերվատիվ (պահպանողական)
Յեւրոպայի դեմ», վոր «առանց յեւրոպական պրոլե-
տարիատի անմիջական պետական ոգնութեան» հնարա-
վոր չէ պրոլետարիատի տեւական դիկտատուրան
ԽՍՀՄ-ում և այլն:

Տրոցկիզմի այս կատարեւորյանտական թեորիան
դարձաւ 1926 թվի միացյալ ռադիկալիստ պլատֆոր-
մը: Մեր կուսակցութեան XV կոնֆերենցիան, ապա
նաև Կոմինտերնի Գործկոմի VII ընդլայնած պլենումը
(1926 թ. դեկտ.) այդ պլատֆորմը եյապես համարե-
ցին աջ ռադիկալիստական, վոր սոցիալ-դեմոկրա-
տական քեֆման արտահայտութեանն է կուսակցու-
թեան ներսում: Այսպիսով «ձախ» հեղ-դ-ափոխական
դիմաւոր քողարկում էր մանր-բուրժուական բովանդա-
կութեանը:

Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան
թեորիայի ռեվոլյուցիոնիստական դրույթները գործնա-
կան հարցերում — ԽՍՀՄ-ում սոցիալիզմի շինարարու-
թեան ուղիների մասին: Ինչպես հայտնի յե, շինարա-
րութեան հանգուցային խնդիրներն են — ինդուստրա-
ցումը, կոլեկտիւիացումը, Լենինի կողմերատիւ պլա-

*) XV կուսակոնֆերենցիայի բանաձեւից:

ևը: Այս բոլոր հիմնական խնդիրներում ուղղորդիչն հարմարեցնել սկսեց ընդհանրապես հիմնական դրույթները:

Լենինը մեզ ուսուցանում էր, վոր անցյալի ծանր մասնագետությունը մեր յերկրն ազատելու ուղին, ուրիշ պետություններից տնտեսական կախումից ազատվելու միջոցը և սոցիալիստական հասարակություն հիմք կառուցելու ուղին յերկրի ինդուստրացումն է:

«Մենք գիտենք, — գրում էր Լենինը 1922 թվին, — վոր առանց ծանր արդյունաբերություն փրկելու և վերականգնելու մենք չենք կարող վորևե արդյունաբերություն ստեղծել: Առանց դրան մենք ընդհանրապես կկործանվենք՝ վորպես ինքնուրույն պետություն»^{*)}:

Կուսակցությունը յերևում էր ընդհանրապես դրույթից, թե՛ «ինդուստրացումը սոց. շինարարության հիմնական ուղին է, իսկ սոցիալիստական ինդուստրիայի հիմնական շուկան մեր յերկրի ներքին շուկան է, ինդուստրացումը պիտի ծափարկի գյուղացիության (չիտսելով արդեն բանվորների մասին) հիմնական մասնայի նյութական դրույթյան անշեղ բարեբախման հիման վրա, վոր ինդուստրիայի ու գյուղացիական տնտեսության, պրոլետարիատի ու գյուղացիության մերձեցումը և պրոլետարիատի դեկամար դերը այդ մերձեցման մեջ, ինչպես Լենինն է ասում, «խորհրդային իշխանության այբուբենն է» և մեր շինարարության հաղթանակը, և վոր այդ կապակցությամբ մեր քաղաքակրթությունն ընդհանրապես և մասնավորապես հարկային ու դների քաղաքականությունն աչքից պիտի կառուցվի, վոր ընդամենը գնա այդ մերձեցմանը»^{**) :}

^{*)} Լենին — Յերկրի ժողովածու, հատ. XVIII, մաս 2, յեր. 95.

^{**) ՄՍՍՄԻՆ — Նորից մեր կուսակցության մեջ յեղած սոցիալ-դեմոկրատական թեքման մասին:}

Կոնկրետ կերպով այսպես էր դրված հարցը, յերբ ուղղվելու էր ընդհանրապես գյուղացիության հիմնական մասնային սոցիալիզմի կառուցման գործի մեջ քաշելու հնարավորությունը, քարոզում էր անվերապահ ինդուստրացում, ի մնա գյուղացիության հիմնական մասնայի, վորը, ուրղվելայի կարծիքով, պիտի ծառայեր վորպես «գաղութ», «չափազործման որբեկա» սրտեափրական պետություն համար: «Ձախ» ուղղվելայի նշանավոր տեսաբաններից մեկը՝ Պրետորովենսկին իր «Экономические замечки» աշխատության մեջ էլ հիմնովին այս տեսակետներն է զարգացրել: Յեւ այս տեսակետներից էլ բխում էր ուղղվելու ընդհանրապես պահանջը՝ ուժեղացնել գյուղացիության հարկային ճնշումը, բարձրացնել արդյունաբերական ապրանքների գործարանային գներից, և այլ ձեռնարկումներ, վորոնք կարող էին խախտել ինդուստրիայի և գյուղացիական տնտեսության մերձեցումը, վատթարացնել չքավորի ու միջակի տնտեսական դրույթյունը և քայքայել ինդուստրացման հիմքերը:

Կուսակցությունը մերժեց «ձախ» գերինդուստրիալիզատիվների փառաբանությունը ու վնասակար յենթադրությունները: Լենինյան կուսակցությունը ճիշտ քաղաքականությամբ ամրացրեց և խորացրեց բանվոր դասակարգի մերձեցումը գյուղացիության հետ, վորով և յերկրի խաղաղության լենինյան ինդուստրացման հիմքը և տեղեց. իսկ այն «ձախ» ուղղվելու խախտումները, վորոնք վերականգնման շրջանի վերջում պահանջուք էին, թե «տարեկան մի Դոնսկոյսկոյ տվեք», հիմա տեմպերի հարցում դարձան «ամենագլխովի կապիտալիստներ»։ Նրանք ձայնակցում են այլ ուղղվելու խախտումներին բայց:

վիկյան տեմպերի չափազանցութեան» և հնգամյակը չորս տարում կատարելու անկարելիութեան մասին և այլն:

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հարցում լենինյան դրույթներին հակադրութեմ եր «ձախ» ուղղիցիայի հակամիջակային դրույթը: Ըստ Լենինի, կոլեկտիվացման հանդուրժեցողական համար պահանջվում եր հատկապես սոցիալիստական շինարարութեան անպարեզ դրամիւլ գյուղացիութեան հիմնական մասսային: Անհրաժեշտ եր, վոր «գյուղի կենտրոնական դեմքը» միջակ մասսան ինքը կամավոր կերպով մտավ կոլտնտեսութեանները: Յեւնելով այս դրութեաններից, կոլտնտեսութեան իր քաղաքականութեամբ ապահովում եր մասսայական շրջադարձը դեպի հողագործութեան կոլեկտիվ ձեւերը: Իսկ «ձախ» ուղղիցիայի արտաքուստ ցայտուն հակակոլեկտիվիզմի դրույթը, գործնականում տանում եր դեպի միջակի և չքաւորի կապի խզում և դեպի միջակի անցնումը կոլեկտիւնի կողմը, այսինքն կոլեկտիւնի ճակատի ամբողջումը և նրան ուսանակելը: «Ձախ» ուղիղիւլի ցայտուն նմուշ տուց այդ դրույթը 1930 թվին, յերբ «հարցուր սովորաւորին կոլեկտիւլիզատորները» իրենց հակամիջակային թեքումներով խախտեցին առանձին շրջաններում կոլտնտեսութեան նշած կոլեկտիւլացման ուսալ ծրագրերը:

Լենինի կոպերատիվ սլլանի «ձախ» ուղղիցիոն բոկը վերաքննութեան եր առնում, ամենախիստ քննադատութեան յենթարկելով կոլտնտեսութեան կոպերատիվ քաղաքականութեանը: Ըստ Լենինի կոպերատիվ

ցիայի միջոցով սոցիալիստական արդյունաբերութեանը մանր գյուղացիական տնտեսութեանը կտանի սոցիալիզմի ճանապարհով, անհատական փոշիացած արտադրական միաւորներից ստեղծելով խոչոր հանրայնացված տնտեսութեան:

«Երբեք կոպերատիվ պլանը, նշանակում ե գյուղացիութեանը սպառողական և փոխադրական կոպերատիւլից բարձրացնել, տանել դեպի արտադրական կոպերատիւլ, դեպի աշակես ասած կոլտնտեսական կոպերատիւլ: Ի միջի ալոց սրանով ել բացատրվում ե այն փաստը, վոր կոլտնտեսութեանները մեզ մոտ սկսեցին սկիզբ առնել և դարգանալ միայն փոխադրական և սպառողական կոպերատիւլի դարգացման և ամբողջման հետեւանքով»*):

1928 թվին մեր սարտոդական և գյուղատնտեսական կոպերատիւլի աճեց ու դարձավ մի հզոր մարմին, միացնելով մի քանի միլիոն գյուղացիական, — չքավոր ու միջակ տնտեսութեան, պետական առևտրի հետ միասին մեծական դեր խաղալով քաղաքի և գյուղի միջև կատարվող աւրանքաշրջանառութեան անպարեզում: Սրանք են այն փաստերը, վորոնք արձանագրված են ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումի կողմից 1928 թվի հոկտեմբերին: Իսկ «ձախ» ուղղիցիայի հակաթեզիսները պատկերացմամբ մեր կոպերատիւլի աշխատում եր հողուտ կոլեկտիւլ, ամբողջում եր շերտաւորումը գյուղում հայաւիսով յերկիրը տանելով վոչ թե դեպի սոցիալիզմ, այլ դեպի կապիտալիզմ:

Մի շարք պրակտիկ պահանջներից, վորոնք վերվում ելին «ձախ» ուղղիցիայի կողմից կոպերատիվ քաղաքականութեան անարտիւլում, առանձնապես աշ-

քի յեր ընկնում վերեվում հիշված «ՅՈՒՈՒՄ. ՅԱՄ.»
գլխի հեղինակի այն պահանջը, թե պետական միջոց-
ները պետք է խաղառ վերցնել կոոպերացիայից և ղեկ
արդյունաբերության մեջ: Այս միջոցառումը բղխում
է մեր կոոպերացիայի սոցիալիստական նշանակու-
թյան ժխտումից, պարզ ու վորոշ կերպով հակադրու-
թյամ է Լենինի ցուցումներին՝ ամեն կերպ ոժանդա-
կելու կոոպերացիային: Լենինն ասում էր. —

«Տնտեսական, ֆինանսական և բանկային — կոո-
պերացիային առվ մի չպար տրտմություններ — ահա
մեր սոցիալիստական պետութայն աջակցությունը
բնակչութայն կոոպակերպման նոր ակդրուքին»:

Յեղիկ ևն նույնիսկ առաջարկություններ, վորոնք
բղխում էին ուղղիցին բրդի խորքերից, կոոպերա-
ցիայի պետականացման մասին, դարձնելով այն խառն
լեններություններ, պետական և նույնիսկ մասնավոր
կապիտալի մասնակցությամբ և այլն: Այս բոլոր նա-
խադեեր պարզապես ցույց են տալիս, վոր «ձախ» ո-
ւղղիցիայի կողմից աղավաղվում էլին Լենինի դադա-
փարները մասսային կոոպերացիայի մեջ գրավելու
կամավորության և խորհրդային յերկրի ամբողջ բնակ-
չությունը նրան մասնակից անելու հարցում: Հարձա-
կումները կոոպերացիայի վրա և նրա ամեն տեսակ վար-
կարեկումները «ձախ» ուղղիցիայի կողմից՝ բղխում
էլին, բնականաբար, Լենինի այն գրութին համաձայն
չլինելուց, ըստ վորի պրոլետարատկան գիտաբանության
ժամանակ կոոպերացիան — այդ «այն բոլորն և, վոր
անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարա-
կակարգ կառուցելու համար»:

Այսպիսով ժխտելով մեկ յերկրում սոցիալիզմ կա-

ռուցելու հնարավորության լենինյան տեսակետը,
«ձախ» ռեվիզիոնիստներին կանգնեցրեց ընդդեմ լենին-
յան կուսակցության փառափառության, վորը պրակ-
տիկայում իրագործում է այդ կառուցումը Լենինի
մատնանշած ուղիներով:

Ներկայումս կարիք չկա մանրամասն վիճելու
«ձախ» ուղղիցիայի տեսական և պրակտիկ դրուժմե-
րի դեմ, վորոնք հերքված և տալարված են մեր դար-
դացման ամբողջ ընթացքով: Հիմա՝ յուրաքանչյուր
քաղաքականապես մտածող պրոլետարի համար պարզ
է տնտեսութայն ընադարձում կատարվող լենինիզմի
վերաբնեւութայն փմատը, վոր կատարում էր տրոց-
կիզմը, վորպես աջ մանր բուրժուական եյության
«ձախ» ըողարկման ամենացայտուն տիպ: Մեր կուսակ-
ցության 16-րդ համագումարում ընկ: Ստալինը՝ ԿԿ
քաղաքական հաշվետվութայն մեջ տվեց ներկուսակ-
ցական պայքարի այդ շրջանի սպառիչ բնութագիրը. —

«Վո՞րն է տրոցկիզմի եյությունը: Տրոցկիզմի
եյությունը նախ և առաջ՝ ԽՍՀՄ-ում բանվոր դա-
սակարգի և մեր յերկրի գյուղացիութայն ուժերով
սոցիալիզմ կառուցելու հնարավորութայն ժր-
տումն է: Այս ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում
է, վոր յեթե մոտիկ ժամանակներում ողնութայն
չհասնի համաշխարհային հաղթական հեղափոխու-
թյունը, մենք ստիպված կլինենք կապիտալիս-
ցիայի յենթարկվելու բուրժուացիայի առաջ և
ճանապարհ հարթելու բուրժուա — դեմոկրատա-
կան հանրապետութայն համար: Ուրեմն, մենք
այստեղ ունենք մեր յերկրում սոցիալիզմի կա-
ռուցման հնարավորութայն բուրժուական ժխտում,
վորը ըողարկվում է «հեղափոխական» Փրադներով
համաշխարհային հեղափոխութայն հաղթանակի

մասին: Կարելի՞ չե արդյոք այս հայացքներով բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին բարձրացնել, հանել աշխատանքային ենտուզիազմի, սոցիալիստական մրցման, մասսայական հարվածաշնուծյան և ծախալուն հարձակման կապիտալիստական տարրերի դեմ: Պարզ է, վոր չի կարելի: Հիմարություն կլինեիր կարծել, վոր մեր բանվոր դասակարգը, յերեք հեղափոխություն կատարելուց հետո, կհամարվի աշխատանքային ենտուզիազմով և մասսայական հարվածաշնուծյան կանցնի ի սեր այն բանի, վորպեսզի պարտացնի հողը կապիտալիզմի համար: Մեր բանվոր դասակարգը դժվարին վերելք է կատարում վոչ կապիտալիզմի, ալլ այն բանի համար, վոր վերջնականապես թաղի կապիտալիզմը և ՈՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցի: Ելեցեք նրանից սոցիալիզմի կառուցման հնարավորության հայտարար, և դուք կոչնչացնեք հարվածաշնուծյան, աշխատանքային վերելքի և սոցմրցության ամեն մի հող: Այստեղից պետք է յեղրակացնել, — վորպեսզի բանվոր դասակարգին բարձրացնենք, մղենք աշխատանքային վերելքի ու մրցակցության և կադմակերպենք ծախալուն հարձակում, ամենից առաջ անհրաժեշտ եր թաղել տրոցկիզմի բուրժուական տեսությունն այն մասին, թե հնարավոր չե սոցիալիզմ կառուցել մեր յերկրում: Յերկրորդ տրոցկիզմի ելությունն այն է, վոր ժխտում է դյուղացիական հիմնական մասսաների ներգրավումը սոցիալիստական շինարարության ասպարեզ դյուղում: Այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր բանվոր դասակարգը դյուղացիական անհայտական տնտեսությունները կոլեկտիվացման փոխանցելու գործում ի վիճակի չե դյուղացիությանն իր յետմից տանելու, վոր, յեթե մոտ ապագայում հա-

մաշխարհային հեղափոխության հաղթանակը բանվոր դասակարգին ոգնության չհասնի, դյուղացիությունը կվերականգնի նախկին բուրժուական կարգը: Ուրեմն, այստեղ մենք ունենք բուրժուական ժխտումն այն բանի, թե պրոլետարիատի դիկտատուրան ուժեր ու հնարավորություններ ունի դյուղացիությանը տանելու դեպի սոցիալիզմ, մի ժխտում, վոր քողարկված է համաշխարհային հեղափոխության հաղթանակի «հեղափոխական» ֆրազների դիմակով: Այսպիսի հայացքներով կարելի՞ չե դյուղացիական մասսաներին մղել դեպի կոլտնտեսական շարժում, կադմակերպել մասսայական կոլտնտեսական շարժումը, կադմակերպել կուլակության վերացումը՝ վորպես դասակարգ: Պարզ է, վոր չի կարելի: Այստեղից ել բղխում է հետևյալ յեղրակացությունը. դյուղացիության մասսայական կոլտնտեսական շարժումը կադմակերպելու և կուլակությունը վերացնելու համար ամենից առաջ հարկավոր եր թաղել տրոցկիզմի այն բուրժուական տեսությունը, թե աշխատավոր դյուղացիական մասսաներին հնարավոր չե հաղորդակից անել սոցիալիզմին:

Այսպես է դրված հարցը լենինիզմի «ձախ» վերաբնության նկատմամբ տնտեսական ասպարիզում:

Բացահայտ ալ ուսկիզբոնիստները «հեղափոխական» ֆրազի հերոսներից ասարեկվում են նրանով, վոր սրանք ՈՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաջողությունը չեյին կապում համաշխարհային հեղափոխության հաղթանակի հետ և այդպիսով, ձեվախանորեն, մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը չեյին ժխտում: Սակայն, սոցիալիզմի կառուցման ուղիների գործնական հարցերում ալ ուլոնիստներն ել վերաբնության եյին յենթարկում լե-

նինիզմի նույն այն դրույթները, ինչ վոր «ճախերը»:

